27 դրամաշնորհ Հայաստանի գիտնականներին՝ Հայ օգնության Ֆոնդի կողմից

Ս.թ. մայիսի 25-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցավ Հայ օգնության ֆոնդի հովանու ներքո գործող Երվանդ Թերզյանի անվան գիտության և կրթության հայկական ազգային հիմնադրամի (ԳԿՀԱՀ-ANSEF) դրամաշնորհների հանձնման հանդիսավոր արարողությունը:

ANSEF-ի հետազոտական խորհուրդը 2022 թ.-ին ներկայացված 139 գիտական հայտերից հաղթող է ճանաչել 27-ը: Ընտրված 27 դրամաշնորհներից 2-ը ֆինանսավորվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության կոմիտեի և «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» կողմից: 27 գիտական խմբերի ղեկավարներից 12-ը մինչև 35 տարեկան երիտասարդ գիտնականներ են: Հաղթողներին ընտրում է ԱՄՆ-ում գործող փորձագիտական հանձնախումբը: Յուրաքանչյուր դրամաշնորհի գումարը կազմում է 5000 դոլարին համարժեք ՀՀ դրամ:

ՀՕՖ-ի փոխտնօրեն, ANSEF-ի կրթական ծրագրերի ղեկավար Էդուարդ Կարապետյանը շնորհավորեց հաղթողներին. «Մեծ հպարտություն ենք ապրում, որ ANSEF-ը, 22 տարի շարունակ հավատարիմ մնալով իր առաքելությանը, շարունակում է հովանավորել Հայաստանի գիտնականներին ու փորձ է անում իր ավանդն ունենալ գիտության մեջ: Վստահ եմ, որ դուք նույնպես ձեր աշխատանքով նպաստելու եք գիտության զարգացմանը: Հուսով եմ, որ մեր համագործակցությունն առաջիկա մեկ տարում շատ ակտիվ կլինի»:

ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի փոխտնօրեն, ծրագրերի տնօրեն Մարգարիտ Փիլիպոսյանը նշեց, որ դրամաշնորհներ ստացել են հիմնականում երիտասարդների կողմից ղեկավարվող խմբերը: «13 դրամաշնորհ ստացել են կենսաբանության ոլորտում աշխատող գիտական խմբերը, 2 դրամաշնորհ՝ քիմիայի ոլորտում, 2-ական՝ ֆիզիկայի և աստղաֆիզիկայի, 1-ական՝ կենսատեխնոլոգիայի, կենսաինֆորմատիկայի և կենդանաբանության: Մինչ օրս ֆոնդի դրամաշնորհների բյուջեն կազմել է 2 միլիոն 835 հազար ԱՄՆ դոլար, ինչը չնչին գումար է գիտության զարգացման համար, բայց անչափ կարևոր և արժեքավոր: Սա ճանապարհ բացող սերն է, որը մենք փորձում ենք ցանել և ձեր օգնությամբ աճեցնել»,- ասաց Մարգարիտ Փիլիպոսյանը:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար Արթուր Իշխանյանն ասաց. «Այսօր միակ հնարավորությունը դիմակայելու գոյութենական մարտահրավերներին գիտատեխնոլոգիական արդիականացումն է, որով պետք է տոգորված լինեն մեր գործունեության բոլոր ոլորտները: Այս առումով գիտնականները մեր հասարակության ամենակարևոր մարդիկ են, իսկ ANSEF-ն այն բացառիկ կառույցներից է, որը ցույց է տալիս մշակութային զարգացման այն փիլիսոփայական ուղղությունը, որով մենք պետք է շարժվենք: Արդեն 22 տարի ANSEF-ը ցույց է տալիս Հայաստան-Սփյուռք կապի ամրապնդման իրական օրինակ, ընդ որում՝ բարձրագույն մակարդակով, քանի որ ANSEF-ի փորձագիտական խմբում ներառված են առաջատար գիտնականներ, Նոբելյան մրցանակակիրներ: Ես կոչ եմ անում մեր գիտնականներին՝ աջակցե՛ք ANSEF-ին, եղե՛ք ակտիվ, ձեր ձայնը լսելի՛ դարձրեք հանրությանը, կառավարությանը, իշխանություններին: Ձեզանից պետք է դուրս գա այն լույսը, որով պետք է լուսավորվի ողջ հանրությունը: Ես մաղթում եմ ձեզ դրական, բացառիկ կարևոր աշխատանք, հաջողություններ ամենաբարձր գիտական մակարդակներում»:

2013 թ.-ից սկսած՝ ANSEF-ն արդյունավետ համագործակցում է «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» հետ: ԵԳԱԾ-ի մասնագիտական փորձագիտական խորհրդի անդամ Հայկ Ձաքարյանը նշեց. «Մեր համագործակցության հիմնական նպատակն է ցույց տալ և ոգևորել երիտասարդներին դիմել ANSEF-ին: Այսօրվա իրավիճակը ցույց է տալիս, որ մենք հասել ենք մեր նպատակին»:

22 տարիների ընթացքում ANSEF-ի կողմից դրամաշնորհներ են ստացել 567 գիտական խմբեր, որոնցում ընդգրկված է եղել մոտ 2100 գիտնական:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին